

Հազարում կալա Օֆուզյանի

Այս վերնագրով է Վարդգես Սուրենյանցը թարգմանել Շեքսպիրի «Songe d'une nuit d'ete» կատակերգությունը: Սուրենյանցի թարգմանությունը լույս է տեսել 1912-ին, Թիֆլիսում, որպես «Նուշարար» հանգեսի մասենաշարի 14-րդ գրքուկի: Նույն կատակերգությունը վերբերս, ավելի ստույգ՝ 1967-ին նորից է թարգմանվել, այս անգամ Բելյուսով: Թարգմանել է և՛ Ռոբոսյանը, ձիշտ է, թարգմանությունը դեռ չի տպագրվել, բայց Բելյուսի «Վահրամ Փափազյան թատերախումբը» ներկայացրել է Պերճ Ֆազլյանի բեմադրությամբ:

Գրականության մեջ մի քանի անգամ խոսք է եղել այն մասին, թե այդ կատակերգությունը թարգմանել է նաև Հովհաննես Մասեհյանը:

Այդ մասին հիշատակություն կա այն անստորագիր առաջարկում, որ կրկնակ հրապարակման է ենթարկվել Վենետիկում, 1962-ին, թե «Նույնիս Կեսարի», թե «Կորնուլանի» առանձին հրատարակությունների մեջ:

Այդ առաջարկը նպատակ ունի սեղմ կերպով բնութագրելու Մասեհյանին, որպես Շեքսպիրի թարգմանիչի: Միաժամանակ այդ հակիրճ խոսքում մեկ-մեկ հիշատակվում են Շեքսպիրից Մասեհյանի թարգմանած պիեսները: Ահա, թե ինչ ենք կարդում. «Միշտամառային գիշերվա երազը» գտնվում է Հայաստանում» (էջ 7):

Դրա մասին խոսում է նաև Գևորգ Դարձին իր «Հովհաննես Մասեհյան» գրքուկում:

«2. Առաքելյանին գրած նամակները,—գրում է նա,—բարեբախտաբար մեծ խնամքով պահվում են Նրեանի գրական և արվեստի թանգարանում, Շեքսպիրից թարգմանած իր «Միշտամառային կեսգիշերվա երազը» թատերադրության հետ» (էջ 20):

Մինչև հիմա ոչ ոք չի գրադվել ճշտելու այդ հայտարարության ստուգությունը:

Գրականության և արվեստի թատերական բաժնի ձեռագիր պիեսների ցուցակում իսկապես հիշվում է Շեքսպիրի այդ պիեսը:

Հետաքրքրվեցինք թարգմանության ձեռագրով, իրոք որ կա: Վերնագիրը թարգմանված է այլ կերպ՝ «Ամառնամեջ գիշերվա երազ»: Թարգմանչի անունը չի տրված ձեռագրում: Բայց ձեռագրագրի համեմատությունը Մասեհյանի մյուս ինքնագրերի հետ թույլ է տալիս մտածելու, որ դա իրապես պատկանում է Մասեհյանի գրչին: Նույնը կարելի է ասել նաև թարգմանության ոճի և արվեստի մասին: Նկատելի է մասեհյանական շունչն ու ոգին:

Դժբախտաբար ձեռագիրը պակասավոր է: Առաջին արարվածից պակասում են 27—30 էջերը: Երկրորդ արարը հասնում է մինչև 33-րդ էջը, 34—69 էջերը լկան: Ձեռագիրը վերջանում է 104 էջով:

Հետևություն:

Մասեհյանը թարգմանել է, բայց, դժբախտաբար, նրա կատարած թարգմանությունը հասել է մեզ ոչ ամբողջական վիճակում:

Թերևս պետք է շարունակել պրպտումները ձեռագրի պակաս էջերը գտնելու հույսով:

Արժե զբաղվել նաև այդ թարգմանության պատմությամբ. երբ է թարգմանել, որտե՞ղ: Ձեռագրից երկու էջ գրված են լոնդոնի հյուրանոցի բլանկի վրա: Սա նշանակո՞ւմ է, արդյոք, որ Մասեհյանը այդ կատակերգությամբ զբաղվել է լոնդոնում, թե այդ բլանկները եղել են հետք, լոնդոնից վերադառնալուց հետո, որ նույնպես շատ հնարավոր է: